



ՀՀ բնապահպանության նախարարություն

«Հայաստան. քաղաքային ջեռուցման եւ տաք ջրամատակարարման էներգաարդյունավետության բարձրացում» ՄԱԶԾ/ԳԷՖ/00035799 Ծրագիր

Գյումրի քաղաքի Խրիմյան Հայրիկի 3ա, 5ա, 4բ և Ռ-ասկատյան 1 բազմաբնակարան շենքերի կենտրոնական ջեռուցման համակարգերի գործարկման ծրագիրը

2001-2003թթ. ընթացքում Գյումրի քաղաքի Թբիլիսյան 1 քաղամասում Լինսի հիմնադրամի և այլ ֆինանսական միջոցների հաշվին ամրացվել են Խրիմյան Հայրիկի 3ա, 5ա, 4բ (80-ական բնակարանով) և Ռ-ասկատյան 1 (40 բնակարան) շենքերը, որոնց ջերմամատակարարումը նախատեսված էր իրականացնել կենտրոնացված համակարգով: Այդ նպատակով ՀՀ բյուջեից հատկացված միջոցներով Շիրակի մարզպետարանի կողմից կառուցվել են 2 կաթսայատներն իրենց արտաքին ջերմային ցանցերով: Այդ կաթսայատների շինմոտաժային աշխատանքներն ավարտվել են 2003թ., սակայն հիդրավիլ փոխձարկումը չի իրագործվել և համակարգերը չեն շահագործվել:

Նշված կենտրոնական ջեռուցման համակարգերի վերականգնման նպատակով «Հայաստան. քաղաքային ջեռուցման եւ տաք ջրամատակարարման էներգաարդյունավետության բարձրացում» ՄԱԶԾ/ԳԷՖ ծրագրի կողմից կատարվել են այդ համակարգերի տեխնիկական վիճակի գնահատում: Այս ցույց տվեց, որ առանց մեծ ներդրումների այդ համակարգը հնարավոր է գործարկել, դարձնելով դրանց էներգաարդյունավետ և դրանց ծառայությունները՝ սպառողների համար մատչելի:



Կաթսայատունը մինչև ծրագրի մեկնարկը

- գազի հաշվիչի ձեռք բերում և տեղադրում,
- ցանցային և սնուցող պոմպերի ձեռք բերում և տեղադրում,
- ընդարձակման անոթների, ջերմության ծախսաչափերի և ճնշման ապահովիչ փականների ձեռք բերում և տեղադրում,
- շենքերի ներքին ցանցերի կանգնակների հիդրավիլ բալանսավորման փականների ձեռք բերում և տեղադրում, ջեռուցման վնասված մարտկոցների փոխարինում,
- ջեռուցման արտաքին և ներքին ցանցերի հիդրավիլակական փորձարկումների անցկացում,
- խողովակազծերի և սարքավորումների ջերմամեկուսացում:

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի Հոգաբարձուների խորհուրդը 30.01.2007թ. թիվ 1/2007 նիստով հավանության է արժանացրել Ծրագրի շրջանակներում Գյումրի քաղաքում ջերմամատակարարման համակարգերի գործարկման աշխատանքների իրականացմանը, որը ֆինանսավորում է ՄԱԶԾ/ԳԷՖ ծրագիրը:

Իերմամատակարարման համակարգի վերականգնման ընդհանուր ծախսերը կազմել են մոտ 31 մլն. դրամ, որից 15.7 ուղղվել են սարքավորումների ձեռք բերմանը և 5.42՝ շինմոտաժային աշխատանքներին, այն են.



Ենթակապալարում և ծրագրի փորձագետը քննարկում են վերականգնման աշխատանքների արդյունավետությունը

Վերականգնման աշխատանքները սկսվեցին 2007թ.: Սակայն շատ թերությունների պատճառով դրանք չեն ավարտվել 2007-2008թթ. ջեռուցման սեզոնի սկզբին: Ավելին, եղանակի պատճառով դրանք ստիպված հետաձգվել են և վերսկսվել 2008թ. աշնանը: Հիդրավիլակական փորձարկումը սկսվել

Է Խրիմյան Հայրիկի 5/1 կաթսայատնից, սակայն Խրիմյան Հայրիկի 2ա շենքում հայտնաբերված թերությունների պատճառով իրականացվեցին միայն Խրիմյան Հայրիկի 5ա շենքում: Ժամանակի սղության և ֆինանսական միջոցների բացակայության պատճառով հնարավոր չէր վերսկսել Խրիմյան Հայրիկի 4/1 կաթսայատան հիդրավիկական փորձարկման աշխատանքները: Իրականացված մեծածավալ աշխատանքների շնորհիվ 2009թ. հունվարի վերջի դրությամբ կանոնավոր ջեռուցում էին ստանում համակարգին միացված 55 բնակարանները, ընդ որում 4-ում ջեռուցվում էին մասամբ:



Բացատրական աշխատանքներ բնակիչների շրջանում

Համեմատության համար՝ նույն 3-սենյականոց բնակարանի ջեռուցման համար միայն գազի ծախսի ամսական միջին արժեքը կազմում է մոտ 23 000 դրամ:

Սակայն «Գյումրի կենտրոն» համատիրությունը մեծ ուշացումով ձեռնամուխ եղավ բնակիչների հետ բնակարանների ջեռուցման պայմանագրերի կնքմանը: Չնայած բնակիչների հետ բազմաթիվ հաղիպումների և Ծրագրի փորձագետների կողմից տարած բացատրական աշխատանքների, ինչպես նաև Խրիմյան Հայրիկի 3ա շենքի բնակիչների բազմաթիվ դիմումների՝ խնդրելով Ծրագրի աջակցությունը այդ շենքը հնարավորինս շուտ կենտրոնական ջեռուցմամբ ապահովումը, փետրվարի սկզբում վերջնականապես դադարեցվեց կենտրոնացված ջերմամատակարարման համակարգի աշխատանքը՝ չվճարման պատճառով:

Շահագործման դադարեցման հիմնական պատճառը կենտրոնական ջեռուցման համակարգի վատ կառավարումը, այսինքն, կենտրոնական ջեռուցման համակարգի տեխնիկական և տնտեսական առավելությունների մասին համատիրության կողմից բնակիչների շրջանում տարվելիք բացատրական աշխատանքի իսպառ բացակայություն, բնակչության հետ ջերմային էներգիայի մատակարարման պայմանագրի կնքման աշխատանքների անհիմն ձգձգում, ջերմամատակարարման համակարգը շահագործող անձնակազմի անպատրաստություն: Այլ գործոններից է սոցիալապես անապահով ընտանիքների մեծ թիվը (21 ընտանիք, կամ 26%), որոնք ի վիճակի չէին մուծելու ջեռուցման վճարները: Պետք է նշել, որ Ծրագրի իրականացման ընթացքում անակնկալ աշխատանքների մեծ ծավալի պատճառով համակարգի գործարկումը հետաձգվել է, առաջացնելով բնակիչների անվստահություն կենտրոնական ջեռուցման նկատմամբ:

Ծրագրի փորձագետների կողմից կատարված մանրամասն վերլուծության և ջեռուցման սակագների մատչելիության գնահատման հիման վրա առաջարկվել է, որ բնական գազի սահագնի և փոխարժեքի աճի պարագայում Խրիմյան Հայրիկի 3ա շենքի միացումը կմեղմի դրանց բացասական ազդեցությունը, այսպիսով, այն տնտեսապես արդարացված է և նույնիսկ վճռական համակարգի կայունության համար: Սակայն կազմակերպական խնդիրների պետք է լուծվեն առաջին հերթին:

Ջեռուցման վճարները հաշվարկվել են ըստ փաստացի սպառման և փաստացի ջեռուցվող մակերեսների: Միջին գումարը՝ 3-սենյականոց բնակարանի համար, որը հունվարի 1-ից ջեռուցվել է լիարժեք, կազմում է 25 750 դրամ և համապատասխանում է 9.1 դր./բ.մ/օր գնին: Համապատասխանաբար, փետրվար ամսվա համար 1 բ.մ ջեռուցման միջին կշռված արժեքը կազմել է 9.1 դր./բ.մ/օր, մարտին՝ 8.9 դր./բ.մ/օր:

Ամսական վճարները	փետրվար	մարտ
2-սենյականոց բնակարան	13,647 դրամ	14,836 դրամ
3-սենյականոց բնակարան	17,781 դրամ	19,332 դրամ



Գործարկման և կարգաբերման աշխատանքները